



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2014 թվականի N 297- Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2014 թվականի «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի, սփյուռքի երիտասարդների «Արի տուն» հայրենաճանաչության և «Սփյուռք» ամառային դպրոցի ծրագրերը (այսուհետ՝ ծրագրեր) համակարգող հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Համակարգող հանձնաժողովի նախագահին՝ ծրագրերի իրականացման նպատակով ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խմբեր և հաստատել ծրագրերի իրականացման ժամանակացույցերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2014 թ. ապրիլի 11
Երևան



Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- ՀՀ սիյուռքի նախարար (հանձնաժողովի նախագահ)
- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
- ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ
- ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
- Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ)
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ (համաձայնությամբ)
- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
- ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ
- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- ՀՀ սիյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ

